

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-փետրվարին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 21.9 մլրդ.դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցել է 5.8%-ով: 2004թ. փետրվարի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է հունվարի 82.7%-ը:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. մարտի 1-ի դրությամբ

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.երևան	0.1	100.0	0.3	100.0	8.1	111.0
Արագածոտն	1.2	100.0	4.2	110.5	2.3	100.0
Արարատ	1.0	100.0	2.5	108.7	3.1	106.9
Արմավիր	1.3	92.9	2.2	104.8	3.3	103.1
Գեղարքունիք	1.9	111.8	6.2	105.1	2.9	100.0
Լոռի	1.1	100.0	4.2	110.5	3.2	139.1
Կոտայք	1.3	118.2	3.5	102.9	35.1	115.1
Շիրակ	1.6	100.0	5.1	104.1	2.7	100.0
Սյունիք	1.0	111.1	3.0	107.1	1.3	100.0
Վայոց ձոր	0.4	100.0	1.2	100.0	1.9	135.7
Տավուշ	0.9	112.5	2.2	100.0	1.6	100.0
ԸՆդամենը ՀՀ	11.8	104.4	34.6	105.8	65.5	112.2

2004թ. հունվար-փետրվարին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 0.5 հազ. տոննայով կամ 4.4%-ով, կաթի արտադրությունը՝ 1.9 հազ. տոննայով կամ 5.8%-ով, ձվինը՝ 7.1 մլն. հատով կամ 12.2%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը: